ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

ԴԱՍ 4.3. Աֆրիկայի բնակչությունը

• • •

17-րդ դարում սկսվեց Աֆրիկայի գաղութացումը Հոլանդիայի, այնուհետև՝ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից:

Այս համառոտ պատմական ակնարկը ներկայացնելու նպատակը ոչ միայն աշխարհագրական հաբտնագործությունները և Աֆրիկայի հետազոտման պատմությունը ներկայացնելն էր, այլև հետագայում Աֆրիկայի գաղութացման պատմության, դրա հետևանքների , բնակչության թվաքանակի, ռասայական, էթնիկական, կրոնական կազմի, քաղաքական քարտեզի ձևավորման պատմությունը և սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրների փոխառնչությունները պարզելն էր:

• • •

Հնագույն մարդու ոսկորների ուսումնասիրությունը Եթովպիայում, Քենիայում ցույց տվեց, որ մարդն առաջացել է գրեթե 3 մլն տարի առաջ: Էվոլյուցիայի ընթացքում էլ առաջացել է բանական մարդը ՝ Homo sapiens-ը: Նշվում է նաև, որ հնագույն մարդն առաջացել է փարթամ խոտային բուսականություն ու հարուստ կենդանական աշխարհ ունեցող սավաննայում, այնուհետև տարածվել ամբողջ մայրցամաքում:

• • •

Արաբները Եգիպտոսի, Լիբիայի, Թունիսի, Ալժիրի, Մարոկկոյի, Մավրիտանիայի բնակչության հիմնական մասն են, Սուդանի բնակչության կեսը , Չադի՝ 30%-ը: Լեզվաընտանիքի եթովպական խմբին պատկանող ամենախոշոր ժողովուրդը ամխարան է:

• • •

Հյուսիսային Աֆրիկայի հին ժողովուրդներից են **բերբերները**, որոնցից առավել աչքի են ընկնում տուարեգները: Նրանք հիմնականում քոչվոր կյանք են վարում Սահարայի անապատային բարձրավանդակներում՝ **Ահագգարի**, **Աիր** և այլն:

• • •

Նրանք ճնշող մեծամասնություն են կազմում կենտրոնական , արևելյան և հարավային Աֆրիկայի շատ երկրներում ՝ Ռուանդա, ՈՒգանդա, Կոնգո, Մալավի, Տանզանիա, Զիմբաբվե, Մոզամբիկ, ՀԱՀ և այլն:

Կվա լեզուներով խոսող ժողովուրդները ապրում են հատկապես Գվինեական ծոցի առափնյա գոտու երկրներում ՝ Լիբերիայից մինչև Կամերուն: Առավել մեծաթիվ են **յորուբաները**, որոնք ապրում են հիմնականում Նիգերիայում:

Մեծաթիվ են նաև **Նեղոս–Սահարյան** լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդները: Դրանց ներկայացուցիչներից նշենք **պիգմեյներին**, որոնք ցածրահասակ են (142սմ), ամրակազմ և ապրում են գլխավորապես խոնավ հասարակածային անտառներում:

• • •

Հնդեվրոպական լեզուների՝ գերմանական, ռոմանական, հնդարիական (նշված լեզվախմբերին պատկանող ի՞նչ ժողովուրդներ գիտեք), աշխարհագրական տարածումը պայմանավորված է գաղութային անցյալով: Երկրների մեծ մասում **մետրոպոլիաների** (գաղութատեր երկրներ) լեզուները պահպանվել են: Այդ լեզուներով են խոսում եվրոպայի գաղութարարների սերունդները : Սակայն եվրոպացիների տեսակարար կշիռը զգալիորեն նվազել է՝ մինչև 2% (ինչո՞ւ):

• • •

Արաբական երկրներում, ինչպես նաև Սոմալիում և Ջիբութիում տիրապետում է իսլամի **սուննի** ուղղությունը: Մահմեդականներ շատ կան նաև Նիգերիայում, Նիգերում, Գանայում, Քենիայում, Սենեգալում, Մալիում: Շատ երկրներում տարածված են ավանդական հավատքները: Քրիստոնեության ուղղություններից տարածված են (50%–ից ավելին) **կաթոլիկությունը** և **բողոքականությունը**. ՀԱՀ, Նամիբիա, Լեսոթո, Բուրունդի, Նիգերիա, Կոնգո, Մադագասկար, Անգոլա:

• • •

Աֆրիկայի բնակչության թվաքանակը 1313 մլն է (2022 թ.): Որոշ կանխատեսումներով 2050թ. այն կանցնի 2 մլրդ . -ից : Աֆրիկայում բարձր է բնակչության բնական աճը, ինչը պայմանավորված է ուրբանացման ցածր մակարդակով և գյուղական բնակչության բարձր տեսակարար կշռով, կանանց վաղ ամուսնությամբ, կրթական (բնակչության 1/3ը , որոշ երկրներում՝ 4/5-ը անգրագետ է) և զբաղվածության ցածր մակարդակով (բացատրեք երևույթը): Թեև շատ երկրներում գյուղատնտեսության մեջ զբաղված է բնակչության 60-70% ը, բայց գյուղատնտեսական արտադրության էքստենսիվության պատճառով դրանք չեն կարողանում իրենց ապահովել պարենամթերքո:

• • •

մի շարք երկրներում նախկին ռեկորդային ցուցանիշները (ժողովրդագրական պայթյուն) արդեն անցյալում են: Բնակչության կեսից ավելին կազմում են երեխաները, ինչն ավելի է սրում զբաղվածության, առողջապահության, կրթական հիմնախնդիրները: Աշխատանքային միգրանտների հատկապես ինտենսիվ հոսքեր են նկատվում դեպի նախկին գաղութային երկրներ (ինչո՞ւ):

Աֆրիկայի ժողովուրդները (հատկապես հասարակածային ռասայի ներկայացուցիչները) եվրոպացիների պատճառով շատ են տուժել: Եթե Աֆրիկայի բնակչությունը 1500թ. կազմում էր աշխարհի բնակչության 11%-ը, 1750 թ. ՝ 9%- ը: Տասնյակ միլիոնավոր մարդիկ ենթարկվել են ստրկավաճառության, տեղաբնիկներին պարզապես ոչնչացրել են, ծանր աշխատանքները հանքերում և տնկատափերում (պլանտացիաներ), սովը , համաճարակները նվազեցրել են բնակչության աճի տեմպերը:

• • •

Ուրբանացման մակարդակը ցածր է, բայց բարձր են տեմպերը (բացատրեք երևույթը), նույնիսկ այնքան բարձր, որ մի շարք քաղաքների բնակչության թվաքանակը վերջին տասնամյակներում կրկնապատկվել է: Եթե 1980 թ. Աֆրիկայում կար 8, 1990թ.՝ 27, 2000թ.՝ 40 ,միլիոնանոց քաղաք, այժմ դրանց թիվը 50-ից անցնում է: Գերխոշոր քաղաքներ են **Կահիրեն** (15մլն) և **Լագոսը** (12 մլն): Խոշոր քաղաքներից են **Ալեքսանդրիան**, **Յոհաննեսբուրգը**: Մի շարք քաղաքեր ունեն բարենպաստ ՏԱԴ (տնտեսաաշխարհագրական դիրք). **Ալեքսանդրիա** , **Սուեզ** (Եգիպտոս), **Քեյթփաուն**, **Դուրբան** (ՀԱՀ): Քաղաքները միմյանցից տարբերվում են հատակագծմամբ, կառուցապատ-

մամբ: Առանձնացվում են աֆրիկյան և արաբական տիպի քաղաքներ: Աֆ-րիկյան տիպին են պատկանում Կենտրոնական և Հարավային Աֆրիկա-յի քաղաքները, որոնք ավելի շատ գյուղեր են՝ տնամերձ հողամասերով, շատ անբարեկարգ, իսկ կենտրոնները բարեկարգ են և կառուցապատված բարձրահարկ շենքերով: Արաբական տիպին են պատկանում Հյուսիսային Աֆրիկայի քաղաքները. խիտ են կառուցապատված, ունեն հին կենտրոն, եվրոպական քաղաքներ հիշեցնող թաղամասեր, ծայրամասային, չքավո-րական թաղամասեր:

Գյուղական բնակավայրերը փոքր են և հիմնականում տեղաբաշխված են սավաննաներում, կիսաանապատների և անապատների օազիսներում: Բերբերները, բուշմենները և հոտենտոտները հիմնականում վարում են քոչ-վոր և կիսաքոչվոր կյանք:

• • •

Միջին դարերում հիմնական աշխարհագրական հետազոտությունները կատարեցին արաբները, որոնք արդեն 11-րդ դարում հայտնաբերել էին Աֆ-րիկայի արևելյան ծովափնյա շրջանները, ավելի ուշ՝ Մադագասկար կղզին, իսկ 15-րդ դարի սկզբներին արդեն շրջանցել էին Աֆրիկան հարավից:

15-րդ դարի սկզբներից սկսվեցին պորտուգալական առաջին նավար-կությունները: Պորտուգալացիները մայրցամաքի արևմտյան ծովափնյա գո-տին հայտնաբերելով հասան հարավ: 1488թ. **Բերտոլոմեյ Դիաշը** հասավ **Բարեհուսո** հրվանդան, իսկ 1498 թ. Վասկո դա Գամայի նավերը շրջանցե-ցին Աֆրիկան հարավից և հասան մինչև Սոմալի թերակղզու հարավային ափերի մոտ գտնվող Մալինդի նավահանգիստ որտեղից էլ ուղևորվեցին Հնդկաստան՝ **Կալիկութ** նավահանգիստ: Նրանք առաջինը հայտնագործե-ցին Հնդկաստան տանող ծովային կարճ ուղին:

• • •

Մաղրիբ – արաբներեն՝ արևմուտք, ներառում է Թունիսը, Ալժիրը, Մարոկկոն, (իսկական Մաղրիբը), ինչպես նաև Լիբիան, Մավրիտանիան, Արևմտյան Սահարան, (Մեծ Մաղրիբը): Միջին դարերում Մաղրիբը ներա-ռում էր նաև մահմեդական Իսպանիան և Արաբական Խալիֆայության տի-րույթները Միջերկրականի արևմուտքում՝ Բալեարյան կղզիներ, Սիցիլիա, Սարդինիա: Մաշրիկ- արաբերեն՝ արևելք: Ներառում է Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան:

• • •

Դասական երկիր էր ՀԱՀ–ը, որտեղ տեղաբնիկ բանտու ժողովրդի համար ստեղծվել էին հատուկ գաղութներ, ռեզերվացիաներ ՝ բանտուստաններ: Սակայն Նելսոն Մանդելայի գլխավորությամբ տեղաբնիկների պայքարը պսակվեց հաջողությամբ և այս երկրում սպիտակամորթների ռասիստական վարչակարգը զիջեց իշխանությունը;

Աֆրիկայի ժամանակակից բնակչությունը ներկայացված է տարբեր ռասաներով, ենթառասաներով, մարդաբանական տիպերով: Արաբները և բերբերները պատկանում են եվրոպեոիդ ռասայի հնդա–միջերկրածովյան ճյուղին՝ համեմատաբար թուխ մաշկ, աչքերի, մազերի մուգ գույն, նեղ դեմք, ոստոտ քիթ:

• • •

Շատ երեխաներ են ունենում, որպես աշխատուժ օգտագործելու համար, բայց չմոռանանք, որ այդ աշխատուժը առաջին հերթին «ուտող բերան» է: Վերջին տարիներին Աֆրիկայում նկատվում է բնական աճի ինքնակարգավորման միտում:

Աֆրիկայի բնակչությունը պատկանում է վերարտադրության երկրորդ տիպին(վերհիշեք հասկացությունը): Նրանք ունեն ծնելիության(20‰–ից ոչ պակաս) և մահացության ցածր ու չափավոր ցուցանիշներ: Բարձր է երեխաների մահացությունը, ցածր՝ կյանքի միջին տևողությունը (52 տարի):

Ուրբանացման մակարդակը ցածր է, բայց բարձր են տեմպերը (բացատրեք երևույթը):